

1968

Միրելի անդամներ ծխական ժողովի,

Հայաստանեայ ց Առաքելական Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ տարեկան ծխական ժողովին, սիրով կ'ողջունենք մեզ, յանուն Ամերիկահայ թեմի քարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգում Ս. Արք. Մանուկեանի

Տարուէ տարի գումարուող ծխական ժողովները լաւագոյն առիթներն են իբրեւ զաւակներ Հայց. Առաք. Եկեղեցւոյ, վերանորոգելու մեր ուխտն ու նուիրումը եւ անխախտ պահելու մեր քարոյական կապը, հանդէպ մեր մայր Եկեղեցւոյ պայ ծառութեան եւ մեր հոգիներու փրկութեան համար:

Տարի մըն ալ ծառայեցինք մեզի հետ, միասին աղօթեցինք, միասին գործեցինք համբերութեամբ, յարատեւութեամբ եւ մանաւանդ սիրով, նախ Աստուծոյ փառքին՝ եւ ապա մեր ժողովուրդին հոգեւոր երջանկութեան համար:

Այսօր տասնընինգ տարիներէ ի վեր մեր իսկ անծնական զոհողութիւններով կանգնած Եկեղեցին եւ յարակից սրահը քաղաքիս կեղրոնք, տեւական միհիթարութեան եւ հոգեկան գոհունակութեան վայր մը դարձած է, մանաւանդ բոլոր անոնց համար, որոնք դեռ երէկ իրենց տունն ու տեղը, Եկեղեցիներն ու դպրոցները, ինչպէս նաեւ զանազան կարգի կազմակերպութիւնները թողած եկան իրենց նոր բոյնը հաստատելու սա խաղաղ եւ ապահով ափերուն, իրենց կեանքի ապահովութեան եւ իրենց ընտանիքներու քարօրութեան համար:

Օրբատօրէ աճող եւ քազմապատկուող Թորոնթոյայ գաղութը այսօր աւելի եւս կարիքը ունի նոր հրամայականներու եւ ծրագրուած նոր որոշումներու գործադրութեանց, քարեղէն շէնքերէն զատ եւ վեր մեր հոգեկան շէնքերուն շինութեան, եւ մեր մէջ աւելի զօրացնելու մեր պարտականութիւններն ու պատասխանատութեանց զգացումները, կարենալ անկորուստ պահելու համար մեզի յանձնուած սրբութիւններն ու աւանդութիւնները: Այն ատեն միայն մենք ոչի՞ միայն նիւթական նուաճումներով պիտի մտահոգուինք, այլ հոգեւոր եւ քարոյական նուաճումներով աւելի եւս հարստացած, պիտի պայծառանք ու քարգաւածինք, մեզի հետ հարստացնելով նաեւ հոգիներն ու զգացումները մեր զաւակներուն, անոնց տալով տեւական հպարտութիւնը հայ անունին եւ հայ արժէքներու գիտակցութեան:

Այս կապակցութեամբ կ'ուզէինք ըսել թէ մեզի համար հոգեկան միհիթարութիւն եղած է մեր եօթնամեայ պաշտօնավարութեան ընթացքին տեսնել կարգ մը ծնողներ, որոնք ոչ մէկ ջանք կը խնայեն իրենց զաւակներուն տալու հոգեւոր եւ ազգային առողջ դաստիարակութիւն եւ արթուն գիտակցութիւն հայ հոգին ու հայ կական արժէքներու:

Իցիւ թէ մեր բոլոր ծնողներն ալ ունենային այսօրինակ նախանձախնդրութիւն եւ յարատեւութիւն, որովհետեւ միայն այս կերպով պիտի կարենանք փրկել մեր ազգի մշացորդացը համայնակուլ եւ օտարամոլ հոսանքէն: Ճանանք փրկել մեր լաւագոյն ամբողջը, հաւաքական գիտակցութեամբ իբրեւ Աստուծոյ հոգեւոր ընտանիքը միասնաբար եւ համագործակցաբար ապրելով ու գործելով սիրոյ ու խաղաղութեան մթնոլորտի մը մէջ:

Գանատայի հայոց Առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Վաչէ Ս. Ապիսկոպոս Յովսէփեան անցնող տարուան ընթացքին քազմաթիւ առիթներով եղաւ մեզի հետ եւ շնորհիւ իր ջանքին, զոհութեան եւ խաղաղ կազմակերպչական աշխատանքներուն, համերաշխ եւ ներդաշնակ տարի մը բոլորեցինք ի միհիթարութիւն բոլորիս:

Մեր սրտագին երախտագիտութիւնները կը յայտնենք նորին Սրբազնութեան որ շատ առիթներով մեզ փոխարինեց, խանդակառութիւն բերելով մեր կրօնական եւ ազգային զգացումներուն, նախագահելով նաեւ մեր ծխական խորհուրդի շատ մը նիստերուն:

Այս հանդիսաւոր առիթով որպէս հոգեւոր հովիւը այս եկեղեցւոյ, սրտի քաղցր պարտականութիւն կը նկատենք մեր զնահատանքը ուղղելու եկեղեցւոյ պատուարժան ծխական խորհուրդին, որ համբերութեամբ, յարատեւութեամբ եւ նուիրումով՝ յաղթահարեց շատ մը դժուարութիւններ պահելու համար մեր եկեղեցւոյ ներքին ներդաշնակութիւնն ու խաղաղութիւնը։ Այս առիթով որպէս կարեւոր նուանում հոս պէտք է յիշել այն որ այս տարի կարելի եղաւ կրահի շինութեան մեր յետնեալ պարտքերը վճարել եւ այդ մտահղանքութենէն ձեռքազատիլ։ Մեր հայրական օրհնութիւնները կ'երկարենք պատուարժան ծխական խորհուրդի մէն մի անդամին, ինչպէս նաեւ եկեղեցւոյ օժանդակ քոլոր յանձնախումբերուն եւ կազմակերպութեանց։ Հոս աւելորդ կը նկատենք անդրադառնալ իւրաքանչիւրին գործունէութեան, քանի որ իւրաքանչիւրին առիթ պիտի արուի այստեղ։ Սակայն կ'ուղենք հոս անպայման յիշած ըլլալ, եւ մեր զնահատանքին հետ սրտազին շնորհակալութիւն յայտնել այն ազնիւ երիտասարդներուն եւ երիտասարդուհիներուն, որոնք ամէն կիրակի կու զան եկեղեցի անձնազոհութեամբ եւ իրենց գեղեցիկ ծայները ի սպաս կը զնեն եկեղեցւոյ սրբազան երգեցողութեան ներդաշնակութեան ի խնդիր, այդ ազնիւ ու հաւատացեալ խումբը զլիսաւորուած է եկեղեցւոյ նկրաց նասու Միութեամբ, դպրապետութեամբ Պր. Մինաս Սէլեանի, վարչութեան ատենապետ Պր. Վարդան Վարդանեանով, երգեհոնահարներ Տիկ. Արաքսի Գասարծեան եւ Պր. Էտուար Լուքայով ինչպէս նաեւ Ս. Սեղանի սպասարկող Ուրարկիր դպիրներով։

Թող փառաց Տէրը ինք վարժատրէ քոլորիս նուիրումն ու ծառայութիւննելը, եւ ուղղէ մեր ձեռքերուն գործերը, եւ մեր ձեռքերուն գործերը յաջողութեամբ պսակէ. ամէն։

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով մնամ

Սիրոյ ողջոյնիւ եւ օրհնութեամբ

Աղօթարար

Ժիրայր Վրդ. Թաշթեան

Թորդիթօ

Ցունկուար 20, 1969